

Պ-309-08.10.2019, 02.12.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ հետևյալ բովանադակությամբ 360.1-րդ հոդվածով.

«Հոդված 360.1 Ջինժառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը.

Ջորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինժառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինժառայողի կողմից, եթե բացակայում են սույն օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, 358.1-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հատկանիշները՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից,
- 2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,
- 3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից ինը տարի ժամկետով:

Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել նոր՝ հետևյալ բովանադակությամբ 360.2-րդ հոդվածով.

«Հոդված 360.2 Ջինժառայողին անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելը.

Ջորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինժառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու

արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից,
- 2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,
- 3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներեք տարի ժամկետով:

Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնչորս տարի ժամկետով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (Պ-309-08.10.2019,02.12.2019-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 360. Ձինծառայողին վիրավորանք հասցնելը

1. Ջորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ստորադասի (ենթակայի) կողմից պետի (հրամանատարի), ինչպես նաև պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

«Հոդված 360.1 Ձինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը.

Ջորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը **պարբերաբար** նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից, եթե բացակայում են սույն օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, 358.1-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հատկանիշները՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից,
- 2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,

3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից ինը տարի ժամկետով:

Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

«Հոդված 360.2 Ջինժառայողին անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելը.

Ջորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինժառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը **պարբերաբար** նվաստացնելու միջոցով անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինժառայողի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,

3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներեք տարի ժամկետով:

Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնչորս տարի ժամկետով»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ
 ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-309-08.10.2019,02.12.2019-ՊԻ-011/1)

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով լրացվող 360.1-րդ և 360.2-րդ հոդվածներում «արժանապատվությունը» բառից հետո լրացնել «պարբերաբար» բառը՝ Նախագծով առաջարկվող հանցակազմերը ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածին համապատասխանեցնելու նպատակով:	Ընդունվել է:Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Առաջարկը ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծում	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:	Ընդունվել է:Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Առաջարկը ընդունվել է:
3.	Պատգամավոր Սերգեյ Ատոմյան	Նախագծի 1-ին հոդված	Հոդված 1-ով լրացվող 360.1 հոդվածի 1-ին մասում և 360.2 հոդվածի 1-ին մասում «արժանապատվությունը» բառից հետո լրացնել «պարբերաբար» բառը:	Ընդունվել է:Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Առաջարկը ընդունվել է: